ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
7 ՕԳՈՍՏՈՍԻ, 2018 Թ. N 1-Ա
ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆՈՂՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8.1.-րդ հոդվածով՝ Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ե զ ր ա կ ա ց ն ու մ է.

1. Բավարարել այլընտրանքային աշխատանքային ծառայություն նախընտրած թվով 21 քաղաքացիների դիմումները և սահմանել վերջիններիս կողմից այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրերը (կազմակերպությունները), ինչպես նաև այլընտրանքային աշխատանքային ծառայության ընթացքում նշված դիմումատուների կողմից կատարվող աշխատանքների տեսակը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրերում (կազմակերպություններում) կատարվող աշխատանքի բնույթը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. <<Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ>> ՊՈԱԿ-ից Կարեն Ղազարյանին և Արթուր Մարտիրոսյանին՝ Երևան, իսկ <<Ավան կանաչապատում>> ՓԲԸ-ից Սարգիս Ավետիսյանին Էրեբունի վարչական շրջան <<Վարդավառ զբոսայգի>> ՓԲԸ տեղափոխելը համարել աննպատակահարմար:

4. Ուսումնասիրելով այլընտրանքային աշխատանքային ծառայություն նախընտրած Իվան Նիկոլայի Միխայլովի և Գուրգեն Հովհաննեսի Ալաբիլիկյանի դիմումները և գործերում առկա մյուս փաստաթղթերը, Հանձնաժողովին նրանց ներկայացրած պարզաբանումները, հետազոտելով «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը և միջազգային փաստաթղթերը՝ Հանձնաժողովը արձանագրեց հետևյալը.

«Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը»: Այս դրույթը համապատասխանում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(87) 8 հանձնարարականին, որի հիման վրա պարտադիր զինվորական ծառայության ենթակա անձը, ով, առաջնորդվելով անհաղթահարելի

համոզմունքներով, չի ցանկանում ներգրավված լինել զենքի օգտագործման հետ կապված գործողություններին, ունի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք: Նույն հանձնարարականի համաձայն՝ այդ անձիք կարող են անցնել այլընտրանքային ծառայություն:

«Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով 2011 թվականի հուլիսի 7-ի վճռի 110-րդ կետով (գանգատ թիվ 23459/03)՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ զինվորական ծառայությունից հրաժարվելը, եթե դա պայմանավորված է եղել բանակում ծառայելու պարտականության ու անձի խղճի կամ խորը և իրական կրոնական կամ այլ համոզմունքների միջև լուրջ և ծանրակշիռ հակասությամբ, հանգեցնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի (մտքի, խղճի և կրոնի ազատություն) երաշխիքների ներգրավման համար անհրաժեշտ «համոզմունքի կամ հավատքի բավարար հիմնավորվածության, լրջության, հետևողականության և կարևորության»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միևնույն գործի 125-րդ կետով նշում է նաև, որ բացառությունները պետք է հիմնված լինեն համոզիչ և հիմնավոր պատճառաբանությունների վրա: 110-րդ կետով դատարանը նախատեսել է նաև, որ այն հարցը, թե ինչ ծավալով է այդ դրույթը տարածվում զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի վրա, պետք է քննարկվի յուրաքանչյուր գործի հանգամանքների ներքո:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այլ վճիռների համաձայն՝ փոքրամասնության խմբի պատկանելու մասին «համոզմունքը», և դրա արդյունքում տվյալ խմբի մշակութային ինքնության պահպանման նպատակն ինքնին չի հանգեցնում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի հետ կապված խնդրի («Սիդիրոպուլոսը և այլոք ընդդեմ Հունաստանի», 10.07.1998թ., գանգատ թիվ 57/1997/841/1047, § 41): Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված լինելու համար՝ հավատքը կամ համոզմունքը պետք է ունենա հիմնավորվածության, լրջության, հետևողականության և կարևորության որոշակի աստիճան, ինչպես նաև համարվի համատեղելի մարդկային արժանապատվության հետ («Քեմփբելը և Քոսանսն ընդդեմ Միացյալ Թագավորության», 22.02.1982թ., գանգատ թիվ 7511/76, 7743/76, §36):

Այսպիսով, Հանձնաժողովը հիմնավորեց, որ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների

համակարգային ուսումնասիրությունից հետևում է, որ այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու համար անհրաժեշտ է հավաստել հետևյալ չափանիշների առկայությունը.

Պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պարտականությունը պետք է լուրջ և ծանրակշիռ հակասության մեջ լինի անձի խղճի կամ խորը և իրական կրոնական դավանանքի կամ այլ անհաղթահարելի համոզմունքների հետ, իսկ բացառությունները պայմանավորված լինեն անձի հիմնավոր, լուրջ, հետևողական և կարևոր համոզմունքով կամ հավատքով:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ դիմումատուները չհիմնավորեցին, որ պարտադիր զինվորական ծառայություն անցնելու իրենց պարտականությունը լուրջ և ծանրակշիռ հակասության մեջ է նրանց խղճի կամ խորը և իրական կրոնական դավանանքի կամ այլ համոզմունքների հետ: Հանձնաժողովը նաև գտավ, որ դիմումատուները, ըստ էության, ցանկանում են ազատվել զինվորական ծառայությունից ոչ թե իսկական կրոնական համոզմունքների պատճառով, այլ անձնական շահերի կամ հարմարության նկատառումներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով («դիմումն ակնհայտ անհիմն է»)՝ Հանձնաժողովը եզրակացրեց մերժել Իվան Նիկոլայի Միխայլովի և Գուրգեն Հովհաննեսի Ալաբիլիկյանի դիմումները:

5. Սույն որոշումը կարող է վիճարկվել օրենքով սահմանված կարգով:

Հանձնաժողովի նախագահ՝	Վ. Տերտերյան	Կողմ_____	Դեմ_____
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Մանուկյան	Կողմ_____	Դեմ_____
	Ա.Ասատրյան	Կողմ_____	Դեմ_____
	Լ. Առաքելյան	Կողմ_____	Դեմ_____
	Վ. Մովսիսյան	Կողմ_____	Դեմ_____
	Վ. Ասցատրյան	Կողմ_____	Դեմ_____